ՇԱՊՈՒՀ Բ-ի ԴՐԱՄ՝ ԽԱՉԻ ՊԱՏԿԵՐՈՎ

Արմինէ Զոհրաբեան

298 թուականին Մծբնի պայմանագրով Սասանեան Իրանի եւ Հռոմի միջեւ կնքւում է խաղաղութեան մասին համաձայնութիւն՝ 40 տարի ժամկէտով: Շապուհ Բ-ն (309-379), խախտելով պայմանագրի ժամկետը, 330-ական թուականներից վերսկսում է պատերազմական գործողութիւնները Հռոմի դէմ: Հայաստանը եւս ներքաշւում է այդ պատերազմի մէջ: Շապուհի արշաւանքները Հայաստան աշխուժութիւն են մտցնում իրանամէտ նախարարների շրջանում: Ձերբակալելով Հայոց Արշակ Բ թագաւորին, գրաւելով Արտագերս ամրոցը, որտեղ գտնւում էր Փառանձեմ թագուհին, Շապուհ Բ-ն 369 թուականին վերադառնում է Իրան, նախօրոք աւերելով Հայաստանի գրեթէ բոլոր գլխաւոր քաղաքները՝ Արտաշատ, Վաղարշապատ, Ձարեհաւան, Վան, Նախճաւան եւ այլն: Քաղաքային բնակչութիւնն իր արհեստաւորներով, առեւտրական դասով եւ, նոյնիսկ, հոգեւորականներով բռնագաղթում են Իրանի խորքերը[1]: Հայաստանը դառնում է բնատնտեսութեամբ ապրող երկիր, որտեղ իւրաքանչիւր գաւառ ինքնաբաւ մի միաւոր էր[2]:

Շապուհ Բ-ի դրամներն ընդհանրապէս առանձնանում են տիպերի բազմազանութեամբ, բայց Հայաստանից գտնուած դրամները պատկանում են միայն մէկ տիպին: Դրանց դիմերեսին պատկերուած է Շապուհ Բ-ն դէպի աջ՝ գլխին պարսպաձեւ թագով, որն աւարտւում է գնդով: Պատկերի շուրջը պահլաւերէն գրութիւն է. «Մազդային երկրպագող աստուածային Շապուհ, արքայից արքայ Իրանի եւ ան-Իրանի, աստուածներից սերող»: Դարձերեսին՝ կենտրոնում պատկերուած է ատրուշանը, որի մի կողմում Շապուհ Բ-ն է, միւս կողմում՝ Ահուրամազդան: Կրակի մէջ պատկերուած է կիսանդրի, որը, Ահուրամազդայի անձնաւորումն է: Ըստ Աւեստայի, կրակը (ատրը) Ահուրամազդայի որդին էր եւ վերջինս պատկերւում էր նաեւ կրակի մէջ[3]:

Կրակը, որպէս Ահուրամազդայի անձնաւորում, անուղղակի յիշատակւում է նաեւ Մովսէս Խորենացու մօտ, երբ վերջինս նկարագրում է Յազկերտ Ա-ի որդի Շապուհի յայտնուելը կրակի բոցերի մէջ եւ այդ առիթով Ատոմ իշխանի տուած մեկնաբանութիւնը «Դարձեալ յայլում ժամու դիպեցաւ ի շամբս կինջս որսալ հրով եւ Շապհոյ ոչ համարձակեալ ի թաւուն քաջարշաւ լինել, մինչեւ շրջապատէր հուրն. եւ նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ այսր անդր բերեալ լինէր երիվարաւն: Ասէ Ատոմ «Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո աստուած, ընդէ՞ր զանգիտես»[4]:

Շապուհ Բ-ի այս թողարկումներում առաջին անգամ սասանեան դրամներում՝ ատրուշանի սեան վրայ յայտնւում է գրութիւն՝ l'st կամ l'styh, որը թարգմանւում է ճիշտ կամ օրինական: Այս գրութիւնը ենթադրել է տալիս, որ նման թողարկումները յատուկ նախատեսուած էին բանակին վճարելու համար: Այս տիպի դրամները կատարուած են ցածր գեղարուեստական ոճով, սակայն ունեն բարձր մետաղական յարգ: Յայտնի է, որ

երկարատեւ արշաւանքների ժամանակ թագաւորին .ուղեկցում էր շրջիկ դրամահատարան, որը դրամներ էր հատում անմիջապէս տեղում վճարելու համար: Բնական է, որ նման դաշտային պայմաններում կտրուած դրամները չէին կարող ունենալ այն բարձր գեղարուեստական նկարագիրը, ինչ ունէին արքունական դրամահատարանների թողարկումները: Հէնց Շապուհ Բ-ի օրօք է սկսւում սասանեան դրամների· կատարման գեղարուեստական մակարդակի անկումը:

Գաղափարախօսութեան ոլորտում Շապուհ Բ-ի պայքարն ուղղուած էր քրիստոնէութեան դէմ, որը պատմութեան մէջ է մտել որպէս մեծ հետապնդումների ժամանակաշրջան[5]:

Շապուհ Բ-ի ռազմական գործողութիւններն արեւմուտքում եւ արեւելքում դատարկել էին արքունական գանձարանը: Քրիստոնեաները, որոնք Սասանեան կայսրութեան ներսում առաւել ունեւոր խաւն էին կազմում, ըստ Շապուհի, կարող էին միջոցների հայթայթման աղբիւր հանդիսանալ: Արքայից արքան հրաման է արձակում քրիստոնեաներից կրկնակի հարկ գանձել: Հարկի հաւաքումը դրւում է քրիստոնեայ համայնքի առաջնորդ՝ Տիզբոնի եպիսկոպոս Սիմոն (Շմաւոն) բար Սաբաղի վրայ: Վերջինս ասորական աղբիւրներում յիշատակւում է որպէս «ներկարարի որդի», քանի որ նրա հայրը մետաքս ներկող էր, որը համարւում էր ամենայարգի եւ եկամտաբեր զբաղմունքներից մէկը: Սիմոնը հրաժարւում է կատարել Շապուհի հրամանը, որի համար 344 թուականին մահապատժի է ենթարկւում: Քրիստոնեաները մեղադրւում են Հռոմին նուիրուածութեան մէջ, ենթարկւում հալածանքների, աւերւում են քրիստոնէական եկեղեցիները[6]:

Այս դէպքերը մանրամասն նկարագրուած են նաեւ Թովմա Արծրունու մօտ. «Շապուհ արքայից արքայ թագաւորեալ՝ բազում եւ անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս եւ Ասորեստանեայց եւ Պաղեստինացւոց... եւ զբովանդակ թոյնս անբժշկականս իժից եւ քարբից եհեղ ի վերայ քրիստոնէից. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, եւ որպէս ասի աւելի քան խո սրբոց արանց, որք վկայեցին վասն Քրիստոսի, բազումք յեպիսկոպոսաց, ի քահանայից եւ յայլ կարգէ յեկեղեցական գնդէ, բազմագոյնք եւ յազատաց աշխարհիս եւ տիկնանց նոցա անհնարին եւ դառն տանջանօք, զոր սարսափեմ...»: Այնուհետեւ պատմիչը յիշատակում է այդ շրջանում հաւատի համար զոհուած մի քանի նահատակների, որոնց թւում նաեւ Սիմոնին (Շմաւոն). «... զՇահդոստ, որ թարգմանի արքայասէր, եւ զ Գոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, եւ զՇըմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի...»:[7] Թովմա Արծրունին սխալմամբ Շմաւոնի ներկագործ անունը վերագրել է Գոհշթասդին:

Շապուհի կողմից քրիստոնէութեան հետապնդումը տարածուեց նաեւ Հայաստանի վրայ. «Հայաստանի քրիստոնէացումը IV դարում պատճառ հանդիսացաւ Հայաստանի եւ Սասանեանների միջեւ աւելի խորը բախումների, քան հռոմէացիների եւ պարսիկների միջեւ՝ այս շրջաններում իրենց ազդեցութիւնը տարածելու համար»[8]:

Հայկական աղբիւրները եւս անդրադառնում են այդ դէպքերին: «Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս եւ զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ յերկիրն Պարսից տայր տանել»[9]: Իսկ Փաւստոս

© National Library of Armenia

Բուզանդը քրիստոնեաների հետապնդումը կապում է Արշակ .Բ-ի երդմնազանցութեան հետ, որից յետոյ «Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն եւ ի ջուր եւ ի կրակ, եթէ ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան, ոչ տամ ապրել եւ հրաման տայր զամենեսեան տանել սպանանել»[10]:

Նման սուր գաղափարական պայքարը չէր կարող արտացոլում չգտնել Սասանեան Իրանում հատուող դրամների վրայ:

Ներկայացուող արծաթէ դրախման, թողարկուած Շապուհ Բ-ի կողմից (ՀՊԹ, 16363, կշիռը՝ 3.65գ, տր. 29մմ), իր պատկերագրութեամբ բացառիկ է եւ կարող է թողարկուած լինել վերոյիշեալ դէպքերի առիթով: Դիմերեսին Շապուհ Բ-ի կիսանդրին է դէպի աջ, պարսպաձեւ թագով, որը պսակւում է եռակէտ զարդանախշով ծածկուած գնդով: Ձախ ուսի վրայ նոյնպիսի եռակէտ զարդ է: Պատկերի շուրջ պահլաւերէն գրութիւնն է. «Մազդային երկրպագող, աստուածային Շապուհ, արքայից արքայ Իրանի եւ անիրանի, աստուածներից սերող»:

Դարձերեսի կենտրոնում պատկերուած է ատրուշանը՝ բաղկացած կրակարանից, հիմքից եւ բարձր սիւնից, որը կենտրոնում կապուած է ժապաւէնով: Կրակից ձախ արքայական նշանն է, իսկ աջ՝ թագաժառանգինը: Ատրուշանի ձախ կողմում կանգնած է Շապուհ Բ-ն, աջում՝ Ահուրամազդան: Երկու կողմից գրութիւն է՝ «Շապուհի կրակը»: Ատրուշանի հիմքի մօտ, երկու կողմից պատկերուած են փոքր, հաւասարաթեւ խաչեր, որոնք տեղադրուած են Շապուհի եւ Ահուրամազդայի ոտքերի տակ:

Դրամն արտաքուստ նման է Շապուհ Բ-ի սովորական համապետական թողարկումներին: Սակայն դրա մանրակրկիտ քննութիւնը սասանեան դրամների պատկերագրութեան կանոնների համատեքստում թոյլ է տալիս ասելու, որ այն յատուկ թողարկում է:

Նախ եւ առաջ, դրամը կատարուած է շատ բարձրարուեստ ոճով, որն առաւել բնորոշ է Գ. դարի սասանեան դրամներին: Շապուհ Բ-ի օրօք դրամների պատկերները կորցնում են անհատական նկարագիրը, իսկ արքայից արքան պատկերւում է այսպէս կոչուած «մեռած աչքերով»[11]: Հակառակ դրան, վերոյիշեալ դրամը ոչ միայն փայլուն գեղարուեստական կատարում ունի, այլեւ կրում է Սասանեանների արքայական իշխանութեան պաշտօնական խորհրդանիշերի ողջ համալիրը:

Քննարկուող դրամի դարձերեսին հաւասարաթեւ խաչի պատկերը միակ օրինակն է, որ հանդիպում է սասանեան թողարկումների մէջ: Խաչերը տուեալ դէպքում չեն կարող դիտուել սասանեանների կողմից պաշտամունքի առարկայ հանդիսացող երկնային լուսատուներ խորհրդանշող նշաններ: Վաղ սասանեան դրամների դարձերեսի պատկերագրութեան մէջ, եթէ օգտագործւում էին առանձին նշաններ, ապա դրանք սովորաբար պատկերւում էին ատրուշանի կրակի վերեւում կամ սեան վրայ, բայց ոչ երբեք հիմքի մօտ: Աւելացնենք նաեւ, որ Գ.-Դ. դարերի սասանեան դրամների դարձերեսի նշանների առատութեան մէջ ընդհանրապէս չեն հանդիպում քառաթեւ կամ վեցթեւանի աստղի նշաններ:

Հետաքրքրութիւն է ներկայացնում այն, որ խաչերը պատկերուած են ատրուշանի հիմքի մօտ այնպէս, ասես գտնւում են Շապուհի եւ Ահուրամազդայի ոտքերի տակ:

Սասանեան պատկերագրութեան մէջ նման յօրինուածքը նորութիւն չէ: Գ.-Դ. դարերում սասանեան արքայից արքաների յաղթանակները նշանաւորւում էին բարձրաքանդակների վրայ իրենց ոտքերի տակ թշնամուն կամ նրա խորհրդանիշը պատկերելով: Թագաւորի դիմաց, որպէս օրէնք, պատկերւում էր Ահուրամազդան, որի ոտքերի տակ չար ուժը խորհրդանշող Ահրիմանն էր[12]: Դրամի վրայ խաչի պատկերումը թագաւորի եւ գլխաւոր աստծոյ ոտքերի տակ պէտք է խորհրդանշէր զրադաշտութեան յաղթանակը քրիստոնէութեան նկատմամբ:

Դ. դարում խաչն արդէն հանդէս էր գալիս որպէս քրիստոնէութեան պաշտօնական խորհրդանիշ: Հռոմում Կոստանդիանոս Ա Մեծի (285-337) օրօք լայն տարածում է ստանում Քրիստոսի փակագիր նշանը, որի հիմքում խաչն է: Ըստ աւանդութեան, հէնց այս նշանն է երեւացել կայսեր տեսիլքում եւ կանխատեսել նրա յաղթանակը[13]: Կոստանդիանոսի դրամների վրայ հանդիպում են նաեւ սովորական հաւասարաթեւ խաչի պատկերներ[14]: Նրա թողարկումներից մէկի վրայ՝ դարձերեսին, պատկերուած է արեւի աստուածութիւնը՝ ճառագայթաձեւ թագով, իսկ նրա ներքեւում՝ նոյնպիսի հաւասարաթեւ խաչի պատկեր է: Դրամի վրայ լատիներէն հետեւեալ գրութիւնն է՝ «Արեւին՝ անպարտելի արքանեակին»[15]: Մեր կարծիքով, այս երկու օրինակները համահունչ են: Կոստանդիանոսը, խաչը պատկերելով ընդհանուր յօրինուածքի ներքեւում, նոյնպէս ցանկացել է ընդգծել արեւի պաշտամունքի գերապատութիւնը քրիստոնէութեան նկատմամբ: Յայտնի է, որ Կոստանդիանոսը միայն իր կեանքի ամենավերջում եկաւ քրիստոնէական հաւատի, իսկ մինչ այդ կայսեր գլխաւոր հովանաւոր աստուածութիւնը մնում էր Ապոլոնը, որը նոյնացւում էր արեւի աստուածութեան հետ:

Սակայն արդէն Կոստանդիոս Բ. կայսրը (317-361), որը քրիստոնեայ էր, 340-ական թուականներից Քրիստոսի փակագիր նշանը տեղադրում է դրամների վրայ ոչ թէ յատուկ առիթներով, ինչպէս Կոստանդիանոսը, այլ որպէս հիմնական գաղափարակիր նշան[16]:

Հաւասարաթեւ խաչի պատկերով առաջին քրիստոնէական դրամը թողարկուել է Եթովպիայում՝ Աքսումի թագաւոր Էզանասի կողմից (330-358): Դրամի վրայ շրջանաձեւ գրութեան առանձին հատուածները բաժանուած են հաւասարաթեւ խաչերով[17]: Սա եւս վկայում է այն մասին, որ 340-ական թուականներին Շապուհ Բ-ի վերոյիշեալ դրամի թողարկման ժամանակ խաչն արդէն հանդէս էր գալիս որպէս քրիստոնէութեան տարածուած խորհրդանիշ:

Հայկական աղբիւրները եւս փաստում են, որ Դ. դարի սկզբներին խաչը որպէս Քրիստոսի նշան, դառնում է նոր հաւատի խորհրդանիշ: Այդ տեսակէտից տեղին է մէջբերել Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի եւ դրա մեկնութեան հատուածը. «... Եւ տեսանէի ի մէջ քաղաքիս, մօտ յապարանսն արքունի, խարսխաձեւ ճախարակաձեւ խարիսխ ոսկի մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր եւ ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչեւ յոյժ, եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ եւ խաչն լուսոյ ի վերայ նորա... իսկ խաչն լուսաւոր ի նմա՛ է ինքն մեծ քահանայապետութիւնն ի մէջ ժողովրդոցն օրինակ Քրիստոսի պատկերին մարմնացելոյ քահանայապետութեանն օծութեան Աստուածորդւոյն»[18]:

Խօսել քննուող դրամի վրայ պատ-

© National Library of Armenia

կերուած հաւասարաթեւ խաչի որոշակի պատկանելութեան մասին, տեղին չէ, որովհետեւ, տուեալ դէպքում, խաչի ամենապարզ եւ տարածուած ձեւը պէտք է խորհրդանշէր պայքար ողջ քրիստոնէութեան դէմ, որը ծաւալել էր Շապուհ Բ-ն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, Աշխատութեամբ՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, Գ-ԼԵ, *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց*, Սանկտ-Պետերբուրգ, 1883, Գ-ԾԵ, ԾԹ:

2 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, Երեւան, 1982, էջ 101:

3 **К. В. Тревер**, *Художественное значение сасанидских монет*, Труды отдела востока Государственного Эрмитажа, т. I, Ленинград, 1939, стр. 267; **И. Рак**, *Мифы античного и средневекового Ирана*, Санкт-Петербург - Москва, 1998, стр. 452; **R. Göbl**, *Sasanian Numismatics*, Braunschweig, 1971, p. 46.

4 Մովսես Խորենացի, Գ-ԾԵ:

5 *Ասորական աղբիւրներ*. Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Մելքոնեանի, Երեւան; **J. Labourt**, *Le Christianisme dans l'Empire Perse sous la Dynastie Sasanide*, Paris, 1904, p. 43.

6 **Լ. Տէր-Պետրոսեան**, *Աբրահամ Խոստովանողի «Վկայք արեւելիցը»*, Երեւան, 1976, էջ 8-9:

7 Թովմայի վարդապետի *Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Սանկտ- Պետերբուրգ, 1887, Ա-Ժ:

8 **Р. Н. Фрай**, *Наследие Ирана*, Москва, 1972, ст. 307.

9 Մովսէս Խորենացի, Գ, ԼԶ:

10 Փաւստոս Բուզանդ, Դ, ԺԶ:

11 **R. Göbl**, *Sasanian Numismatics*, Braunschweig· 1971, p. 46.

12 **В. Г. Луконин**, *Культура Сасанидского Ирана. Новые материалы и опыт исторической реконструкции*, Москва,1969, стр. 185-196.

13 **А. Донини**, *У истоков христианства*, Москва, 1989, ст. 218.

14 **P. Braun**, *The Victorious Sings of Constantine: a Reappraisal*, The Numismatic Chronicle 157, London, 1997, p. 56.

15 **А. А. Нейхардт**, *Происхождение креста*, Москва, 1956, ст. 48.

16 **M-P. Fouchet**, *L'art de Byzance et de l'Islam*, Paris/Bruxelles, 1979, p. 44.

17 **R. Carson**, *Coins of the World*, New York, 1962, p. 463; **T. Higel**, *Garmisch-Partenkichen: Axumide Coinage: A Premiliminary Tipology*, Newsletter of Oriental Numismatic Society 176, Bergambacht, 2003, p. 3

18 Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1914, 736-745:

ՀԱՅ ԱԶԱՏԱՐՁԱԿՆԵՐԸ ԱՐՐԵՏԻՈՒՄ ՔԱՂԱՔՈՒՄ

Ջուստո ՏՐԱՒԻՆԱ (Լեչէի համալսարան, Իտալիա)

Պերեննիուսի գործատունը Արրետիումի կարեւորագոյն խեցեգործական արհեստանոցն էր եւ, հաւանաբար, ամենակարեւորը բոլոր նրանցից, որոնք արտադրում էին արրետեան խեցեղէն, որն այսօր անուանում ենք իտալական terra sigillata: Արրետիում քաղաքի արուարձանում, Զինչելլի վայրում, ինչ-որ ժամանակ հիմնուել էր մասնաճիւղ[1]: Մ.թ.ա. I դարի երկրորդ կէսով եւ յաջորդ դարի առաջին կէսով թուագրուող ռելիեֆազարդ սափորների դրոշմապատկերները մեզ տալիս են այդ արհեստանոցի երկու պատասխանատուների անուններ. Marcus Perennius Tigranus եւ Marcus Perennius Bargat(h)es[2]: Անօթների ձեւերի տիպաբանութիւնը, ինչպէս նաեւ զարդաբանման ոճը վկայում են, որ այս անձերը համապատասխանում են արհեստանոցի գործունէութեան երկու տարբեր փուլերին, եւ որ Tigranus-ը եղել է Bargat(h)es-ից առաջ[3]:

Այս անձանց պաշտօնների եւ ծագման հարցերը լիովին պարզաբանուած չեն:

Գիտնականները համակարծիք են միայն Tigranus եւ Bargat(h)es անուններին արեւելեան ծագման խնդրում: Օգիւստ Օքսէն առաջինն էր, որը ներկայացրեց Marcus Perennius Tigranus-ի մասին, ճիշտ է՝ մի քիչ հեռու գնացող, վարկած: Ըստ նրա, այդ արեւելցին հռոմէական քաղաքացի է դարձել ոմն Մարկուս Պերեննիուսի շնորհիւ, որը, սակայն, արհեստանոցի հետ առնչութիւն չի ունեցել: Օքսէն, այնուամենայնիւ, հարց է տալիս. «արդեօք արեւելցի Տիգրանուսը եղե՞լ է ստրուկ»[4]: Ըստ Օքսէի, նա կարող էր ժամանել Իտալիա Ք.ա. 29 եւ 25 թթ. միջեւ[5]: Ինչ վերաբերում է Bargat(h)es-ին, Օքսէին չի յաջողուել պարզել նրա կողմից արհեստանոցը գլխաւորելու հանգամանքները (հաւանաբար՝ Tigranus-ի մահից յետոյ), այլ սահմանափակուել է արձանագրելով, որ այդ անունը «մատնում է» նրա արեւելեան ծագումը[6]:

Մի քանի տարի անց, Հանս Դրագենդորֆը Tigranus-ի եւ նրա յաջորդ Bargat(h)es-ի մասին առաջ քաշեց լրացուցիչ վարկածներ[7]: Հետեւելով Օքսէի դատողութիւններին, Դրագենդորֆը նոյնպէս ենթադրում էր, որ արեւելեան ստրուկների ներկայութիւնն այստեղ կապուած է Անտոնիոսի եւ Կլէոպատրայի դէմ Օկտաւիանոսի վարած ալեքսանդրեան պատերազմի հետ: Այս վերակազմութիւնը մասամբ քննադատուել է Հ. Քոմֆորտի կողմից: Վերջինս ուշադրութիւն էր հրաւիրում այն փաստի վրայ, որ Արրետիումում օգոստոսեան ժամանակաշրջանը նշանաւորուեց մի էական փոփոխութեամբ՝ կատարուեց անցում սեւ խեցեղէնից կարմիր խեցեղէնի: Դրանով, հեղինակը զգուշացնում էր հետազօտողներին հեռու մնալ չափազանց դիւրաբեկ պատմական վարկածներից[8]:

Ջուզեպպէ Պուչչին, երեսուն տարի առաջ լոյս ընծայած իր հիմնաւոր յօդուածում չի անդրադառնում այդ երկու անձնաւորութիւնների ծագման հարցին, բայց ենթադրում է մասնագիտացած ստրուկների շուկայի գոյութեան մասին:

© National Library of Armenia